կամարութիւնք օրինականութեան, արդարութեան եւ բոլորովին անաչառ վերաբերումի սկզբունքով երկրի բոլոր այլազան տարրերի հանդէպ՝ առանց նրանց միմեանց դէմ հանելու եւ բացառիկ հովանաւորութիւն ցոյց չտալով որեւէ ժողովրդի ի վնաս ուրիշի: Այսպիսով հնարաւոր կը լինէր տրամադրել հայերին, որոշ շրջաններում, դպրոցական եւ եկեղեցական ինքնուրոյնութիւն, լեզուից օգտուելու իրաւունք, այլ եւ քաղաքային եւ գիւղական ինքնավարութիւն՝ պահպանելով ընտրութիւնների ժամանակ ազգաբնակութեան տոկոսային համեմատութիւնը:

Ոչ-քրիստոնեայ տարրերի նկատմամբ պէտք է կիրառել նոյն սկզբունքը, որքան որ թոյլ կը տան տեղական պայմաններն ու նրանց մշակութային զարգացման աստիճանը: Վերոյիշեալ ժամանակաւոր վարչութեան նախագիծը մասամբ արդէն ընդունում է այս տեսակէտը՝ տալով որոշ չափով ինքնավարութիւն «գիւղական հասարակութիւններին» ու «գիւղական շրջաններին»:

Օրինականութեան եւ անաչառութեան միեւնոյն սկզբունքը պէտք է պահպանել եւ տեղական հողային ու ներդաղթի խնդիրները լուծելիս:

Այս տեսակէտից անպայման անհրաժեշտ է խիստ քննութեան ենթարկել վերջին ժամանակներս տեղի ունեցած բոլոր բռնութիւնի դէպքերը, երբ մահմեդականները ինքնագլուխ կերպով գրաւել են տեղահանուած կամ սպանուած հայերի գոյքերը, եւ վերականգնել իրական տէրերի կամ նրանց ժառանգների իրաւունքները:

Իմ խորին համոզումով վերոյիշեալ սկզբունքների կիրառումը կը ներշնչէ տեղական բնակչութեան յարգանք դէպի տեղական իշխանութիւնը, կը խլէ հողը ամէն տեսակ ներքին եւ արտաքին անառողջ քարոզչութեան տակից եւ տեղական ազգաբնակութեան համար կը ստեղծէ կեանքի այնպիսի պայմաններ, երբ նա առանց ափսոսանքի կը յիշէ թիւրքական տիրապետութեան անցեալ ժամանակները» (207–209):

Ուրեմն, Ռուսաստանի տեսակէտը Հայաստանի ապագայի վերաբերմամբ ձեւակերպուում է շատ որոշ՝ տրամադրել հայերին, որոշ շրջաններում, դպրոցական եւ եկեղեցական ինքնուրոյնութիւն», այսինքն՝ ո՛չ աւելի, քան այն, որ 1836 թուի հռչակաւոր «Պոլոժենիէն» էր տալիս ռուսահայերին:

* * *

Սպասնովի նամակին Կովկասի փոխարքայ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը պատասխանում է նոյնքան որոշութեամբ, 3–16 Յուլիսին՝ թիւ 21083:

«Սէրգէյ Դմիտրիեւիչ· ի պատասխան Ձեր 14 Յուն· թիւ 540 ինձ ուղղած դիմումի ես լիակատար կերպով համաձայն եմ Ձեզ հետ, որ խիստ ցանկալի է հէնց հիմա, մինչեւ պատերազմի վախճանը, մշակել՝ պատերազմի իրաւունքով Թիւրքիայից գրաւուած շրջանները ռուսական կայսրութեան սահմանների մէջ մտցնելու խնդրի համար դեկավար սկզբունքներ, եւ շատ լաւ եմ գիտակցում հայկական հարցի լուծման բարդութիւնն ու դժուարութիւնը:

Հայկական հարց ասածդ այժմ գոյութիւն ունեցող ռուսական կայսրութեան սահմաններում, իմ խորին համոզումով, բոլորովին բացակայում է ,եւ պէտք չէ նոյնիսկ թոյլ տալ, որ լիչուի նման մի հարց, որովհետեւ ռուսահպատակ հայերը փոխարքայութեան սահմաններում հաւասար իրաւունքներ ունեցող հպատակներ են հանդիսանում, համահաւասար մահմեդականներին, վրացիներին եւ ռուսներին: Եւ կարծում եմ, որ ինձ վստահուած կովկասեան փոխարքայութեան մէջ իշխանութիւնը պէտք է ձգտի առանց բացառութեան բոլոր ազգերի կատարեալ հաւասարութեան, եւ չեմ կարող ծածկել, որ այս երկրում գոյութիւն ունեցող ազգային շփումների վրայ, մինչեւ այժմ, լուրջ ազդեցութիւն է ունեցել, թերեւս եւ ոչ գիտակցուած ձեւով, երկրի իշխանութեան ուղղութիւնը: Այս դարաւոր վէճ ու կռիւներով ստեղծուած շփումը, ես պնդում եմ, կը հանդարտի այն ժամանակ, երբ իշխանութիւնը անվթար կերպով դիտակցի, որ Կովկասում ապրող բոլոր ժողովուրդները պէտք է օգտուին ռուսահպատակների միեւնոյն իրաւունքներով, որոնք հաւասարապէս մօտիկ են ցարի սրտին: